

**ԱԶԱՏ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ԳԻՀՈՒ ՆՈՍՐԱՆՏԱՌՆԵՐԻ ՖԼՈՐԱՆ,
ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Սամվելյան Ն. Ի. Գասպարյան Ա. Ս. Հակոբյան Հ. Պ. Ստեփանյան Ն. Տ.

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն,
e-mail: nerses.samvelyan.70@mail.ru

Լեռնային երկրներին բնորոշ բուսաաշխարհագրական օրինաչափությունները միանգամայն ցայտուն են արտահայտվում նաև Հայաստանի Հանրապետության բնատարածքում, որը բնորոշվում է կենսաէկոլոգիական պայմանների մեծ բազմազանությամբ և բուսականության ֆլորիստական կազմի եզակի հարստությամբ: Այդ տեսակետից, գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում գետավազանների լեռնահովտային բնատարածքային համալիրները՝ բուսականության չափազանց հարուստ և ինքնատիպ ֆլորիստական կազմով: Գետահովիտների երկրաբանալիթոլոգիական տարասեռ կառուցվածքը, մակերևույթի ձևաբանական առանձնահատկությունները, հովտալանջերի ձևաչափական բնութագրիչների անհամաչափությունը, իսկ հովտի հատակային մասում նաև մշտական ջրահոսքի առկայությունն այն գլխավոր գործոններն են, որոնք պայմանավորում են ջրաջերմային հաշվեկշռի տարբերություններն ու ստեղծում ուրույն միկրոկլիմա: Վերջինս էլ՝ ձևավորելով կենսաէկոլոգիական յուրօրինակ պայմաններ՝ նպաստում է բուսականության տիպերի ու դրանց ֆլորիստական կազմի բազմազանությանն ու տեսակային հարստությանը:

Հայոց բնաշխարհի գեղատեսիլ անկյուններից մեկը՝ Ազատ գետի էրոզիոն տեկտոնական հովիտը գտնվում է երեք տարածքային միավորների կազմում: Գողթ և Գեղարդ գետերի վերնագավառն ընկած է Գեղամա, Ազատ գետի վերին և միջին հոսանքների ավազանը՝ Երանոս-Ուրծի ֆիզիկաաշխարհագրական շրջաններում, իսկ

ավագանի Ազատի ջրամբարին հարող մասը գտնվում է Եղվարդ-Կոտայքի ենթաշրջանում:

Ազատ գետի ջրհավաք ավագանի ֆլորայի և բուսականության ձևավորման վրա իր ազդեցությունն է թողնում Արարատյան հարթավայրի չոր, խիստ ցամաքային կլիման: Սակայն, կախված ռելիեֆի ձևաչափական առանձնահատկություններից, մասնավորապես լեռնալանջերի կողմնադրությունից՝ նկատվում են ջրաջերմային վարքի զգալի տարբերություններ, ինչը կանխորոշում է նաև հողագոյացման գործոնների բնույթն ու ինտենսիվությունը:

Նկատենք, որ Ազատ գետի ջրհավաք ավագանն ունի խայտաբղետ հողածածկույթ: Ավագանի աջափնյա հովտալանջերին տարածվում են կրազերծված սևահողեր, մուգ շագանակագույն, շագանակագույն և բաց շագանակագույն, տեղ-տեղ կարբոնատային հողերը: Ձախափնյա հովտալանջերի հիմնական հողատիպերն են անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված, մուգ շագանակագույն և շագանակագույն, տեղ-տեղ կարբոնատային հողերը: Ազատի ջրամբարի աջափնյա բնատեղամասերը ծածկված են կիսաանապատային գորշ կարբոնատային հողերով (Սամվելյան Ն., Գասպարյան Ա., 2015): Ըստ Ա. Լ. Թախտաջյանի՝ Արարատյան գոգավորության ֆիզիկաաշխարհագրական շրջանը, հետևաբար, նաև Ազատ գետի ավագանը գտնվում է Փոքրասիական, Հայկական և Իրանական ֆլորիստական մարզերի շփման կիզակետում, որոնք միավորվում են Ասորպատենյան բուսաաշխարհագրական ենթապրովինցիայի կազմում (Թախտաջյան, 1946): Ընդհանուր գծերով, տարածաշրջանի բուսականությունը կրում է չոր կիսաանապատատափաստանային և ժայռաթփուտային բնույթ:

Որպես հետազոտության հանգուցային տեղամասեր են ընտրվել Ազատ գետի և դրա վտակների ձախափնյա՝ Աղջկաբերդ կոչվող տեղավայրից մինչև Ազատի ջրամբար տարածվող հովտալանջերը, որոնք պատված են գիհու նոսրանտառներով՝ առավելապես *Juniperus polycarpus* և *Juniperus oblonga* տեսակների գերակայությամբ:

Գիհու նոսրանտառները սերտ պարադինամիկ կապերի մեջ են գտնվում Արարատյան գոգավորության բուսական քսերոֆիլ ֆորմացիաների հետ՝ դրսևորելով օշինդրային կիսաանապատների, հացազգատարախոտային և տրագականտային տափաստանների վերածման անցողիկ խմբավորումներ: Առանձնապես ցայտուն են արտահայված գիհու նոսրանտառների ֆրիզանայի վերածման սուկցեսիաների միջանկյալ փուլերը: Նոսրանտառների տեսակային կազմում առայժմ ցենոֆոնդ առաջացնողը բազմապտուղ ու երկարատերև գիհիներն են, բայց նվազ առատությամբ և թույլ վերածով:

Հետազոտությունների մեթոդաբանական հիմքում դրվել են տեղանքի շրջատեղազննման (рекогносцировка), երթուղային դիտարկումների, հանգուցային տեղամասերի, լանդշաֆտային հանույթի, քանակական վերլուծության, թեմատիկ քարտեզների համադրման և քարտեզագրական մեթոդները: Դաշտային

դիտարկումների ընթացքում կիրառել ենք ստացված նյութի արձանագրման մատենաաղյուսակային ձևը:

Հետազոտությունների մեթոդիկայիում առանձնահատուկ տեղ է հատկացվել ուսումնասիրվող բնատարածքի գիհու նոսրանտառների տեսակային կազմի, դրանց էկոլոգիական վիճակի գնահատման հիմնահարցերին և պահպանման միջոցառումների մշակմանը՝ հիմնված տարածքի լանդշաֆտային պլանավորման սկզբունքների վրա:

Ազատ գետի ավազանի գիհու նոսրանտառներում մեր կողմից արձանագրվել է 165 ցեղերի և 52 ընտանիքների պատկանող բարձրակարգ անոթավոր բույսերի 261 տեսակ: Կատարվել է գիհու նոսրանտառների ֆլորայի առաջատար ընտանիքների, ցեղերի և տեսակների բազմակողմանի վերլուծություն (Սամվելյան, Գասպարյան, 2015, 2017):

Ազատ գետի ավազանում զգալի է գիհու առանձին տեսակների (բազմապտուղ գիհի-*Juniperus polycarpus* և երկարատերև գիհու – *J. oblonga*) ցրվածությունը ժայռախճային, հաճախ հողային ծածկույթից զուրկ լեռնալանջերին, որտեղ գերակշռում են ֆրիգանոիդ տիպի ֆիտոցենոզները:

Դաշտային երթուղային դիտարկումների միջոցով մեր կողմից իրականացվել են Ազատ գետի ավազանի գիհու նոսրանտառների կարգաբանական կազմի և բուսատեսակների կենսաէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրություններ: Ազատ գետի ավազանի գիհու նոսրանտառների ֆլորայի առաջատար ընտանիքների ու ցեղերի որոշ քանակական բնութագրիչներ ներկայացվում են ստորև (Աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Գիհու նոսրանտառների ֆլորայի առաջատար ընտանիքները, ցեղերն ու տեսակները

N ^o	Ընտանիքը	Տեսակների քանակը	Բաժինը %	Ցեղերի քանակը	Բաժինը %
1.	Asteraceae – աստածաղիկազգիներ	28	11,5	20	12,1
2.	Poaceae – դաշտավլուկազգիներ	22	9,0	17	10,3
3.	Fabaceae – բակլազգիներ	18	7,4	7	4,2
4.	Scrophulariaceae – խլածաղկազգիներ	18	7,4	6	3,6
5.	Cariophyllaceae – մեխակազգիներ	16	6,5	8	4,8
6.	Apiaceae – նեխուրազգիներ	15	6,1	11	6,6
7.	Rosaceae – վարդազգիներ	13	5,3	9	5,4
8.	Lamiaceae – խուլեղինջազգիներ	12	4,9	9	5,4
9.	Valerianaceae – կատվախոտազգիներ	12	4,9	2	1,2

10.	Brassicaceae – կաղամբազգիներ	9	3,7	9	5,4
	Ընդամենը 10 ընտանիք	163	66,7	98	59
	Մնացած 42 ընտանիքները	98	33,3	67	41

Ինչպես երևում է աղյուսակից՝ տեսակային առավել հարուստ կազմ ունի աստղաձաղկազգիների ընտանիքը: Ֆլորայի հաջորդ առաջատար ընտանիքը դաշտավլուկազգիներն են: Աղյուսակի երրորդ և չորրորդ հորիզոնականները զբաղեցնում են բակլազգիների և խլածաղկազգիների ընտանիքները: Ֆլորայի տաս առաջատար ընտանիքները ներկայացված են 163 տեսակներով (ֆլորայի 66,7 %-ը), մնացած 42 ընտանիքները՝ 98 տեսակներով (ֆլորայի 33,3 %-ը): Ներկայումս ծառահատումների, և հատկապես, բնական վերաճի նվազման հետևանքով գիհուտները տարեց-տարի կրճատվում են: Գիհու վերաճին խիստ կերպով խանգարում է նաև անասունների ականոն արածեցումը, որոնք խոտի հետ միասին շատ հաճախ ոչնչացնում են նաև գիհու մատղաշ տունկերը:

Ազատի կիրճի գիհուտային նոսրանտառներն իրենց թույլ մրցակցության պատճառով հարմարվել են ռելիեֆի ձևաբանական առանձնահատկություններին՝ առաջացնելով ծայրաստիճան խոցելի ու կազմալուծված ծառաթփային շարահարկ-սինուզիա:

Ինչպես արդեն նշվել է, ուսումնասիրվող բնատարածքի գիհու նոսրանտառները սերտ էկոդինամիկ փոխհարաբերության մեջ են գտնվում մի շարք քսերոֆիլ բուսական ֆորմացիաների հետ՝ դրսևորելով օշինդրային կիսաանապատների և հացազգա-տարախոտային տափաստանների վերածման տարբեր անցողիկ խմբավորումներ: Առավելապես ցայտուն են արտահայտված գիհուտային նոսրանտառները ֆրիգանայի վերափոխման միջանկյալ փուլերը: Նոսրանտառների հիմքն առայժմ շարունակում են մնալ բազմապտուղ ու երկարատերև գիհիները, բայց արդեն ցածր առատությամբ և վերաճի բացարձակ բացակայությամբ: Այստեղ առկա են ֆրիգանոիդ բուսականության բազմաթիվ նոր տարրերի՝ *Amigdalus fenzliana*, *Rhamnus pallasii*, *Pistacia mutica*, *Cerasus mahaleb*, *C. incana*, *Helithrisum armenium* նորագոյացումներ, որոնք դրսևորում են արեալն ընդարձակելու ցենոտիկ մեծ ակտիվություն:

Հարկ է նշել, որ հատկապես բարձր է գնահատվում գիհու նոսրանտառների ֆլորայի բնապահպանական նշանակությունը: Գիհու նոսրանտառները հիմնականում տեղակայված են մեծ թեքության լեռնալանջերին, որտեղ արիդ կլիմայական պայմաններում ակտիվ են զործում ֆիզիկական հողմահարման ու լանջային լիթոդինամիկ պրոցեսները՝ հողատարման, քարաթափման, սողանքային, էրոզիոն-սելավային երևույթները: Դրա հետ մեկտեղ, տարածաշրջանը հայտնի է նաև բարձր սելյամոակտիվությամբ: Շնորհիվ արմատային համակարգի բարձր կցվածության՝ գիհու ծառուտները նպաստում են լանդշաֆտի կայունությանը՝ որոշակիորեն նվազեցնելով հողի էրոզիայի, սողանքների, սելավների ուժգնությունն ու հաճախականությունը, հողագրունտների դինամիկ լարվածությունը: Արմատային

զարգացած համակարգը նպաստում է դրանց հարմարողականությանը անբարենպաստ հողակլիմայական պայմաններին, թույլ է տալիս գոյատևել նույնիսկ խիստ չոր, անբերրի և ժայռախճային գոյացություններով ծածկված բնատեղամասերում, և դրանով իսկ՝ մեծացնում գիհու նոսրանտառների հողապաշտպան ու հակաերոզիոն նշանակությունը:

Տեխնածին գործոնների հետզհետե խորացող ներգործության հետևանքները բնական էկոհամակարգերի ֆունկցիոնալ գործունեության, բիոտիկ կապերի խախտման, կենսամիջավայրի (բիոտոպի) էկոլոգիական լարվածության աճի, հետևապես նաև՝ կենսաբազմազանության նվազման լուրջ սպառնալիք են ստեղծում: Ազատի ավազանի գիհու նոսրանտառային բուսականության հարուստ ֆոնդը տարեց – տարի նվազում է ոչ բավարար պահպանության պատճառով: Ֆլորայի և բուսականության սուկցեսիոն փոփոխությունների հիմնական պատճառը, ինչպես նշվել է, հանդիսանում է մարդածին գործոնը: Կապված անթրոպոգեն տարաբնույթ ազդեցության հետ՝ Ազատ գետի ավազանում դիտվում է բնական էկոհամակարգերի, այդ թվում և՛ գիհու նոսրանտառների կենսաբազմազանության նվազում, տեղի են ունենում ֆլորայի տեսակային կազմի ու ֆունկցիոնալ-կառուցվածքային անցանկալի փոփոխություններ, ծառուտները կորցնում են բնական վերականգնման՝ ունակությունը, նվազում է դրանց արտադրողականությունը: Անթրոպոգեն ազդեցության հետ մեկտեղ ռիսկային գոտում գտնվող գիհու նոսրանտառային էկոհամակարգերին սպառնացող գործոն է հանդիսանում նաև կլիմայի համամոլորակային փոփոխությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սամվելյան Ն. Ի. Գասպարյան Ա. Ս. Ազատ գետի ավազանի բուսականության հանգուցային տիպերը, ֆլորիստական կազմը և պահպանման հիմնախնդիրները, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական տեղեկագիր N 2-3 /24-25/, Երևան 2015թ., էջ 132-146.
2. Գասպարյան Ա. Ս. Սամվելյան Ն. Ի. Ազատ գետի ավազանի ֆլորիստական բազմազանությունը և բուսականության կենսառեսուրսների դասակարգումը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Գիտ. տեղեկագիր, N1 (30), Երևան, 2017, էջ 80-88.
3. Գասպարյան Ա. Ս. Նոր և հազվագյուտ բուսատեսակներ ու բուսական համակեցություններ Գառնիի ձորում, <<Հայաստանի բնություն>>2000, էջ 44-46.
4. Գասպարյան Ա. Ս. Երևանի ֆլորիստիկական շրջանի համար բուսական նորույթներ Ազատ գետի ավազանից /Հայաստանի էկոլոգիական հանդես/ <<Զանգակ 97>> հրատ. N1, Եր. 2002, էջ 29-32.
5. Գրիգորյան Ա.Ա. Վարդանյան Ժ.Հ., Վարդանյան Դ. Վ.<<Հայաստանի դենդրոֆլորայի մշտադալար տեսակները, դրանց պահպանության վիճակն ու վերարտադրության ուղիները>>, //Հայաստանի ֆլորայի և բուսական ծածկույթի վիճակն պահպանությունը, Եր., 1984, էջ 152-165.
6. Թախտաջյան Ա. Լ. <<Հայաստանի բուսական աշխարհը>> Երևան 1946թ, 48 էջ.

THE JUNIPER SPARSE FORESTS FLORA OF THE AZAT RIVER, ECOLOGICAL STATUS
AND ENVIRONMENTAL SIGNIFICANCE

Samvelyan N. I. Gasparyan A. S. Hakobyan H. P. Stepanyan N. T.
Armenian State Pedagogical University. H. Abovyan, Yerevan,
Republic of Armenia,

The floristic composition of juniper sparse forests, ecological status and preservation issues one of the basic species of vegetation of the Azat River catchment basin are presented in the following article. 261 species of high-quality venomous plants have been registered in juniper springs that belong to 165 tribes and 52 families, the analysis of which is given in the textual description. The field baseline study carried out by our 2005-2017 semi-observation surveys in the upper and mid-stream basin of the Azat River became the initial theme of current work.